ԱԼՎԱՐԴ ՄԱՅԻԼՅԱՆ
ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոն

ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՓԱՌԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ԺԱՆ-ՊՈԼ ՍԱՐՏՐԻ «ՍԱՏԱՆԱՆ ԵՎ ՏԵՐ ԱՍՏՎԱԾ» ՊԻԵՍՈՒՄ[1*]

Բանալի բառեր - հպարտություն, փառամոլություն, դժոխք, Աստված, Սատանա, ընտրություն, մեղք, ազատություն, գերմարդ, էկզիստենցիալիզմ

Սարտրի ստեղծագործությունները՝ «Սրտխառնոց» վեպը, «Գոյը և չգոյը» փիլիսոփայական աշխատությունը, «Ճանճեր», «Փակ դռների ետևում» դրամաները, մասնակիորեն նաև «Ազատության ճանապարհները» վեպը և այլք էկզիստենցիալիզմի բարձրագույն դրսևորումներ են: Հոդվածի նպատակն է հպարտության և փառամոլության կոնցեպտների օգնությամբ բացահայտել «Սատանան և տեր Աստված» պիեսի գլխավոր հերոս Գեցին: Սարտրը Գեցի միջոցով ներկայացնում է մարդու բարոյական արկածները: Մեկուսացած հերոսը փորձում է սկսել մարդկային պայքար այլ մարդկանց դեմ: Գեցը երես է թեքում Աստծուց, որպեսզի իրեն ներկայացնի մարդկանց աշխարհին: Նա բացահայտում է ինքնաոչնչացման մի նոր ձև և հրաժարվում է իր կերպարի հավերժական բեմադրությունից: Գեցի բնավորության ամբողջ էությունը պտտվում է ողբերգական հակամարտության շուրջ, որտեղ նա փորձում է պահպանել մեկուսացումը մարդկանցից՝ միաժամանակ գաղտնի կերպով ձգտելով սիրո և ընդունման: Գեցը կարծում է, որ նա ազատ է չարիք գործելու հարցում և դրանով իսկ պարտություն է կրում իր անհատականությունը: Սա իր փառասիրությունն է: Բայց Գեցի հպարտությունը պատրանք է, քանի որ նա միայն արտաքին հաստատակամություն ունի և հանդես է գալիս այնպես, կարծես թե իր գործի վարպետը չէ: Հպարտ իր մենությամբ սարտրյան հերոսը, իրոք, միայն ընդունում է այն պայմանը, որ հասարակությունն է սահմանում և սպասում է դրա ճանաչմանը: Սարտրի շատ այլ դրամատիկ կերպարների նման, նա գոյություն ունի ուրիշների, Աստծու կամ այլ մարդկանց աչքերում, և դրանով էլ բացահայտում է ինքն իրեն: Ծայրահեղ բռնության տեր ռազմիկը՝ Գեցը, լավագույն կապիտանն

1* Ընդունվել է տպագրության 25.01. 2022 թ.

է ամբողջ Գերմանիայում, որի փառքը տիրում է Ուտրմս քաղաքում՝ որպես ոչնչացման բութ սպառնալիք՝ պիեսի առաջին գործողությունում: Սակայն, Սարտրի պիեսում, առաջնայինը Գեցի ըմբռնումն է այլ հերոսների աչքերում, ովքեր տեսնում են, ճանաչում նրան և կապում իր հրեշավոր «բնության» հետ: Այն, որ Գեցը հայտնվում է միայն պիեսի երկրորդ տեսարանում, կարելի է դիտարկել որպես դրամատիկ հնարք, որի միջոցով Սարտրը փորձել է Գեցին դարձնել հակամարտության կենտրոն: Այլոց քննարկման գլխավոր թեման է այդ նորահայտ անձնավորությունը, որը հենց ինքն էլ հանդիսանում է սյուժեի հանգույցը՝ դրամատիկ գործողությունների հիմքը: Հենց այդ հասարակական արժեքների բացասական բնույթի շնորհիվ էլ կազմավորվել է Գեցի կերպարը. դա կապված է այն ճակատագրի հետ, որը սպասում է նրան բեմում, քանզի Սատանայի և Աստծո հերոսը համարում է իրեն եզակի: Գեցը չի նայում աշխարհին օպտիկական սարքի միջոցով, բայց ամեն քայլափոխի գայթակղվում է իր կերպարի արտացոլումից, ոգեշնչված մյուսների աչքերով՝ որոնցում նա դատապարտված է ընդունել իրեն: Նախքան բեմ դուրս գալը նրան արդեն տեղ էր հատկացված աշխարհում, որտեղ անձը վերջնական փոխարկումից առաջ երբեք չի մտածում ինքն իրենից ազատվելու մասին:

«Եթե մենք ուրիշների հայեցակարգը մղում ենք եզրագծին, հանդիպում ենք Աստծուն» (Սարտր, 328-329): «Սատանան և տեր Աստված» պիեսում, Գեցի հայացքների առարկան երբեմն համընկնում է մյուս մարդկանց հայացքների հետ, երբեմն Ամենակարողի՝ բացարձակ սուբյեկտի, հետ, որը երբեք չի կարող վերածվել օբյեկտի: Ամբողջ պիեսի ընթացքում Գեցն ինքն իրեն տալիս է ուրիշներին: Բայց միևնույն ժամանակ, խանդավառվելով իր հպարտությամբ, նա ձևացնում է, որ մարտահրավեր է նետում Աստծուն. «Ես չեմ մտածում դևի մասին, - ասում է նա Հայնրիխին. նա ընդունում է հոգիները, բայց այդ նա չէ, ով անիծում է նրանց: Ես վճռեցի գործ ունենալ միայն Աստծո հետ, հրեշներն ու սրբերը միայն նրա մոտ են գալիս: Աստված տեսնում է ինձ, քահանա, նա գիտի, որ ես սպանել եմ իմ եղբորը, և նրա սիրտն արնահոսում է » (Սարտր, 59):

Գեցը համաձայն է իր մեղքի և իրավիճակի անխուսափելիության հետ: «Իհարկե, սրիկաները դավաճանում են. այլևս ի՞նչ եք պահանջում նրանցից» (Սարտր, 57): Այնուամենայնիվ, Գեցի բնավորությունը չի տանում դեպի օտարման:

«Մենք չենք, և մենք ոչինչ չունենք: Բոլոր օրինական երեխաները կարող են վայելել հողը առանց վճարելու: Ոչ դու, ոչ ես: Մանկուց ես աշխար-

հին եմ նայել բանալու անցքի միջով. այս գեղեցիկ, փոքրիկ, լեփ-լեցուն ձվին, որտեղ բոլորը զբաղեցնում են իրենց հատկացված տեղը, բայց ես կարող եմ վստահեցնել ձեզ, որ մենք դրա մեջ չենք մտնում: Դրսից: Հրաժարվեք այս աշխարհից, որը չի ցանկանում ձեզ: Չարիք գործելով, դուք կտեսնեք, թե ինչպես եք զգում լույսը», ասում է Գեցն իր եղբորը (Սարտր, 57):

Գեցը ձգտում է հնազանդությունը վերափոխել ազատ ընտրության: Սարտրը միաժամանակ հետազոտում է Ժենեին նվիրված էջերը, որտեղ հպարտությունը անբաժան է մեղքից. «Հպարտությունը խղճի անդրադարձն է, ներդրված ուրիշների կողմից և որն իր բացարձակ կախվածությունը վերափոխում է բացարձակ բավականաչափության» (Սարտր, 72):

Հանցագործի մենաշնորհային տեղը զբաղեցնելով, այսինքն, ընդունելով իր ճակատագիրը, հետևելով այն օբյեկտին, որն ուրիշների համար է և դրանով իսկ նվիրելով բարոյականությանը, որը դատապարտում է նրան, Գեցը բացահայտում է ճանաչված և սիրված լինելու չճանաչված ցանկությունը: Նրա չարամիտ այլությունը, որն անհրաժեշտ է հասարակական լավ գործելակերպի համար, իրենից ներկայացնում է վերահինտեգրման ուղի:

«Ձվարճալի պատերազմ» և «Գոյը և չգոյը» գրքերում, Սարտրն արդեն խորհում է հպարտություն հասկացության մասին, որը նա կապում է ամոթի հետ: Հարկ է նշել, որ իր փիլիսոփայական աշխատությունում Սարտրը կարծում է, որ հպարտությունը համարվում է իրական վերաբերմունք, «որով ես գրավվում եմ, որի միջոցով մյուսները դառնում են իմ ազատության հաստատումը իրենց առաջ», այն ժամանակ երբ Սարտրը՝ «Սեն Գենում» կապում է իրեն մեղքի զգացումի հետ:

Պիեսում Գեցի հպարտությունն ունի տարբեր իմաստներ. եթե դա ամենից առաջ անազնվության արձագանք է, այնուամենայնիվ, հերոսի ուղու վերջում դառնում է ազատականացման իրական միջոց: Գեցը բացահայտում է, որ իր գիտակցության եզակիությունը համարվում է մարդկային վիճակի ընդհանրություն: «Ես կմնամ մենակ այս դատարկ երկնքի հետ, որն իմ գլխավերևում է, քանի որ ես այլ միջոց չունեմ բոլորի հետ լինելու համար» (Սարտր, 252):

Եթե հպարտությունը բավականին բարդ հասկացություն է Սարտրի փիլիսոփայության մեջ, կա մի հասկացություն, որը երբեմն մոտ, բայց շատ ավելի սահմանափակ է: Սա հպարտություն է, որ Սարտրը նաև փառամոլություն է կոչում: Սարտրյան լեզվում փառամոլությունը կդիտ-

վեր «անհավասարակշիռ զգացմունք», որում Գեցի խոսքերով. «ես փորձում եմ ներգործել այլոց վրա, քանի որ ես օբյեկտ եմ. գեղեցկությամբ, ուժով կամ ոգով, որոնցով նա օժտում է ինձ, քանի որ նա նույնպես հանդիսանում է օբյեկտ, ես հաստատում եմ, որ օգտագործել եմ նրան, պասիվ ներգործել նրա վրա հիացմունքի կամ սիրո զգացումով, ի պատասխան լինելով ցնցված» (Սարտր, 330): «Սատանան և տեր Աստված» պիեսում տեղի է ունենում շրջադարձ, իսկ Գեցի որակները բացասական արժեքներ են, օրինակ, մի չարիքի հրեշ, որը հանդիսանում է նաև մաքրության մի ձև կամ սատանայի չար բռնկում: Այնուամենայնիվ, դինամիկան, որը նկարագրում է Սարտրը, ինչի հետևանքով առաջացել է փառասիրության զգացումը, սկզբունքորեն մնում է նույնը: Գեցը փառասեր է, քանի որ նա ձգտում է ներգործել մյուսների վրա, օգտագործելով իր իմիջը, առանց առաջացնելու որևէ հիացմունք կամ սեր, այլ նողկանք, սարսափ, ատելություն, որոնք անկախ ամեն ինչից ճանաչման ձևեր են: Երբ, օրինակ, Հայնրիխը փորձում է հաղթահարել իր գայթակղությունները և պատրաստվում է դիմակայել դիվային տեսքին, Գեցը հարցնում է նրան. «Դուք երբևէ տեսե՞լ եք նրան; և, հետևելով քահանայի դրական պատասխանին, նա կրկին հարցնում է. «Ես նմա՞ն եմ նրան: » (Սարտր, 55): Գեցը հուսով է, որ Հայնրիխն իր մեջ նշմարում է չարիքի դիմագծեր. նա ցանկանում է հայտնվել քահանայի առաջ սատանայական հռչակավոր սև լույսով, և դա է նրա փառասիրությունը:

Սարտրյան հերոսի փառասիրությունը, այսպիսով, մոտենում է եսասիրության, որի մասին խոսում է Ռուսոն: Մենք կարող ենք ասել Գեցի մասին, որ ուրիշների կարծիքով, «նա նկարում էիր սեփական գոյությունը»: Ճանաչման ձգտումը ետ է պահում նրան ինքն իրենից: Գոյություն ունի փառասիրության հակասություն, որը բացահայտում է Սարտրը, ձախողման ծագումը, որն անխուսափելիորեն սպառնում է իրեն: Գեցի փառասիրությունը հիմնված է դավաճանի և սրիկայի չարագործ բնավորության վրա, և որին հավակնում է նա՝ ազատության և եզակիության հասնելու համար: Նա չարիք է գործում, որպեսզի միայնակ դուրս գա բոլորի դեմ: Եվ նույնիսկ այն ժամանակ, երբ քահանան նրան ցույց է տալիս չարիքի բազմակողմանիությունը՝ «Արդարացի դժոխքը», նա ասում է. «Գեցը ձգտում է պաշտպանվել անկախ իր մենությունից և անտարբերությունից: «Չարիքը նրանց չի պատկանում. նրանք չարիք են գործում իրենց իսկ ցանկությամբ կամ հետաքրքվածությամբ. ես չարիք եմ գործում հանուն չարիքի» (Սարտր, 106):

Չարիքի մեջ միայնակ լինելն է նրա հպարտությունը: Սակայն Գեցը

պատրանքի զոհ դարձավ: Մի կողմից, քանի որ սրբապիղծը երբեք միայնակ չի լինում, և, մյուս կողմից, քանի որ առանձնահատկությունը, որով նա քծնում է ինքն իրեն, կարող է միայն գոյատևել որպես հասարակության շրջված արտացոլում. դա իմաստ ունի միայն այն դեպքում, եթե ցուցադրում է իր հակադիրը. դա կախված է նրանից, արդյոք ինչ է փորձում հերքել: Գեցի առանձնահատկությունը ոչ ադեկվատ է, դրանք նրա «աշխարհիկ» որակներն են, որոնք պահանջում են անվերջ ցուցադրումներ, ինքնագնահատականը՝ ուրիշների աչքերում, դատողություններ և համեմատություններ: Գեցը գտնվում է ինքնագնահատականի ծուղակի մեջ: Աստծո առաջ, այլ մարդկանցից հեռու, Գեցը տեսնում է, որ նա վերածվում է կենդանու: Լինելով անիծված և դատապարտված այն կոտորածի համար, որը նա նախապատրաստում է շողոքորթում է ինքն իրեն սրբությամբ, որը, նրա կարծիքով, շնորհ է իր անձին: Ինչպես ցույց է տալիս Ֆիլիպ Սաբոտը[1], Գեցն ակնկալում է Աստծու բացասական ճանաչումը, որը միշտ կմնա թերի, բայց որը նրան պարզապես վեր կդասի իր ընկերներից Աստծո հետ հաղորդակցման ժամանակ: Ըստ այդ նույն սկզբունքի, որը նշվեց, խոսելով փառասիրությունից, Գեցն առաջին հերթին ցանկանում է գտնել իր սեփական կերպարը Աստծո հայացքում, ապա ազդել հենց Աստծո վրա, ում նա, այնուամենայնիվ, ընդունում է որպես բացարձակ սուբյեկտ: Գեցը փորձում է զայրացնել Աստծուն, որպեսզի նա տառապի. ակնհայտ է, որ բոլոր այդ ջանքերն անիմաստ են, քանի որ դրանք լի են փառամոլության զգացումով, որը Սարտրը նկարագրում է «Գոյը և չգոյը» ստեղծագործության մեջ. իր չարիքի մաքրությանը վերագրելով բացարձակ օբյեկտիվություն, Գեցը պետք է տեսնի իրեն Աստծո աչքերում: Այստեղ կարևոր դեր է խաղում հայելին և դրա արտացոլանքները, որոնք փոխկապակցված են սարտրյան հերոսի օտարման հետ, ով հանուն կերպարի զրկվել է իր գոյությունից: «Ես ամեն րոպե մտածում էի, որ կարող եմ լինել Աստծո աչքերում», - ասում է նա Հայնրիխին (Սարտր, 237):

«Մարդուն բացի իրենից ուրիշ ոչինչ պետք չէ: Երջանիկ է այն մարդը, ով իր գոյությունը լցնում է իրենով: Մարդն ամբողջական է, երբ միայնակ է» (Շոպենհաուեր): Սարտրի հերոսը միայնակ է: Նա երջանկության չի ձգտում: Նիցշեն ասում է «Աստված մեռել է», Պալանիկն ասում է «Աստված քեզ լքել է», Կաֆկան ասում է «Դժոխքը մենք ենք», իսկ Սարտրն ասում է «Դժոխքը ուրիշներն են»: Եթե Աստված մեռել է և ամեն ինչ կարելի է, ուրեմն Սարտրի հերոսն իրավունք ունի գործելու բոլոր դաժանությունները: Գեցը անցնում է եվգենիկան[2]: Գերմարդու կարևորագույն

1 Ֆիլիպ Սաբոտ – ֆրանսիացի փիլիսոփա
2 Ճանապարհ դեպի գերմարդ

զգացումը մեղքի բացակայությունն է: Երբ չկա խղճի խայթ, երբ կարող ես ենթարկել, սպանել և ոչ ոք չի կարող քեզ մեղադրել: Նիցշեն ասում է, որ ոչ մի գերմարդ սեր ու կյանք չի ունենում, միաժամանակ երբ Գեցը կատարում է էկզիստենցիալ ընտրություն. գերմարդ թե ստրուկ, հասկանում ենք, որ գերմարդու համար ամենակարևորը իշխելու ձգտումն է: Սարտրը գտնում է, որ մարդը կատարելապես միայնակ է, որովհետև աստվածացման պրոցեսն ավարտվել է: Նա նաև խոսում է գոյության և էության համընկնումներից: «Ես գոյություն ունեմ և ինքս եմ ստեղծում էությունս: Ես միակ էակն եմ, ով ծնվում է ինքնագիտակցությամբ»: Մարդու բնույթն ինքնակատարելագործման մեջ է: Գեցը փորձում է անցնել այդ ճանապարհը, բայց կրկին ետ է վերադառնում: Սարտրի գրականության մեջ աթեիզմն ակնհայտ է: Սարտրը չի սգում Աստծո կորուստը: Մարդը դատապարտված է ազատության. Նա կարող է խուսափել դրանից, աղավաղել, հերքել այն, բայց ստիպված է առերեսվելու՝ եթե ուզում է դառնալ բարոյական էակ: Մարդն ինքը պիտի սահմանի իր իմաստը, նվիրի իրեն այս աշխարհի իր դերին, իրագործի իր ազատությունը: Գեցը ազատ է որոշելու թե որ ճանապարհն է ընտրում: Գերմարդը նա է, ում զորության կամ իշխանության կամքը այնքան ազատ է, որ մաքրվել է ռեսենտիմենտից[1] և վրեժի զգացումից: Նա այլևս վեր է կանգնած վրեժից և պարադիգմայից: Նա անհատապաշտությունը հաղթահարած անհատն է: Նա մարդության ողջ տիեզերքը ներառող խնդիրն է: Գերմարդը ոչ՛ գաղափար է, ոչ՛ պատկեր, ոչ՛ պատկերացում մարդու հեռանկարային կարողությունների մասին: Գերմարդը կոչ է, դիմում, գանգատ: Գերմարդը բարոյական զարգացման տեսություն է: Այն կոչ ու աղերսանք է՝ բարոյա-հոգևոր մարդուն վերաճելու ակնկալությամբ: Նիցշեն վաղուց էր գլխի ընկել, որ գերմարդուն չեն հասկանալու, շատերը նրան սատանա են անվանելու: «Սատանան և Տեր Աստված» պիեսը էքզիստենցիալ պայքար է արտաքին աշխարհի, մեր նմանների և մեր (դևերի, ստվերների) դեմ: Կամյուի «Կալիգուլա» պիեսում բացահայտվում է, որ ազատությունն անեծք է: Կյանքն անտանելի է և Կալիգուլան Լուսինն է ուզում: Սեր բառն արգելված է էկզիստենցիալիզմում: Սարտրի բոլոր հերոսները զրկված են սիրելու ունակությունից: Ազատ լինել նշանակում է լինել ինքդ քեզ հետ: Ազատ լինել ըստ Սարտրի նշանակում է ընտրություն կատարել: Ազատ լինել նշանակում է չգործել և չմտածել ինչպես բոլորը, նշանակում է գտնել ինքդ քեզ հետ իսկ Կամյուն տնում է, որ ազատ է այն մարդը, ով հասկացել է կյանքի անիմաստությունը: Սարտրի «Դռնփակ» պիեսի հերոսները կյանքը դժոխքի են վերածում այն պատճառով, որ յուրաքանչյուր

1 Հիշաչարություն

մարդու համար դժոխքը ուրիշներն են: Էկզիստենցիալ դժոխքում դրսից եկած ոտնձգություններից ազատվելու ուրիշ տարբերակ չկա, բացի ուրիշի կամքը և ազատությունը ոտնատակ տալու միջոցով սեփականը հաստատելուց: «Էկզիստենցիալիզմը հումանիզմ է» հոդվածում Սարտրը կրկնում է իր հիմնական փիլիսոփայական գաղափարները՝ գոյությունը նախորդում է էությանը, նախագիծ է, ոչինչ, որ միայն հետո կդառնա այն, ինչ ինքն իրենից կստեղծի, չկա պատճառականություն, մարդն ազատ է, չկա ընդհանուր բարոյականություն, լքվածությունն ու իմաստի, արդարացվածության բացակայությունը ծնում են մշտական տագնապի ու թախծի տրամադրություն: Մարդն ինքն է իրեն «ընտրում», բայց ընտրությունը որոշում են հանգամանքները:Մարդը կախված է ժամանակածրջանից, իր դրությունից, նա չի կարող ընտրել իր ծագումը և սոցիալական վիճակը: Դու բացի քեզնից պատասխանատու ես նաև մյուս բոլոր մարդկանց համար: Ընտրելով քեզ, ընտրում ես ուրիշներին, մարդկությանը:

Ժան-Պոլ Սարտրի «Սատանան և տեր Աստված» պիեսում բացահայտվում են բոլոր խավերը: Սարտրն ասում է. «Երբ հարուստները պատերազմում են իրար դեմ, չքավորներն են մահանում»: Աստված կամ սիրում է բոլորին կամ էլ լքում, բայց Սարտրը հույս ունի, որ գոնե Աստված տխրում է, երբ տեսնում է, որ մարդը տառապում է: Ըստ Սարտրի աշխարհը վաղուց կորած է: Պիեսում Նաստին ասում է. «Քո եկեղեցին պոռնիկ է, նա իր շնորհները ծախում է հարուստներին: Մենք կարիք չունենք ոչ մի քահանայի. բոլոր մարդիկ կարող են մկրտել, թողություն տալ մեղքերին, քարոզել: Բոլոր մարդիկ մարգարեներ են: Ես միայն մի եկեղեցի եմ ճանաչում. դա մարդկային հասարակությունն է»: Սիրելու իրավունքը ըստ Սարտրի ձեռք է բերվում արյուն թափելով: Գեցի էքզիստենցիալ ընտրությունից հետո, երբ նա պիտի որոշi ընտրում է 200 քահանա թե քսան հազար մարդ, ներքին մենախոսություն է սկսվում: Նա անընդհատ խորհում է կյանքի մասին: «Պետք է սպանել այն, ինչ սիրում ես: Եթե փախչում ես, ուրեմն ընդունել ես որոշումը: Իմն այն է, ինչ ինքս եմ վերցնում: Մարդ միշտ ուզում է խլած լինել այն, ինչը գուցե նրան պիտի սիրահոժար տային: Շահն է ղեկավարում աշխարհը:

Չարիքը պետք է ցավ պատճառի բոլորին և առաջին հերթին նրան, ով գործում է: Ինչ էլ պատահի Գեցի ներսում, նա է միակ պատասխանատուն: Հրաշք չկա ու չկա: Դժոխքը մրջնանոց է, իսկ մարդուն թվում է, թե ինքն է միակ չարագործը: Եթե ուզում ես արժանանալ դժոխքին, բավական է, որ հանգիստ պառկես քո անկողնում: Աշխարհը անարդար է. դու

մեղսակից ես, եթե այն ընդունում ես. դու դահիճ ես, եթե այն փոփոխում ես: Մենք բոլորս հավասարապես մեղավոր ենք և արժանի ենք դժոխքին, բայց Աստված ներում է, երբ տրամադրություն ունի ներելու: Բարությունը հուսահատություն է ներշնչում: Երբ Աստված լռում է. ամեն մեկն իր ուզածի պես է մեկնաբանում նրա լռությունը: Սատանանա Աստծո արարաչագործությունն է. եթե Աստված կամենա, Սատանանա ինձ կհնազանդվի: Մենք հանցավոր չենք և Աստված իրավունք չունի մեզ պատժելու: Հենց սկզբից ամեն ինչ կանխորոշված է՝ դու շահելու ես թե ոչ: Ժամանակն ու ջանքերն ավելորդ են: Գեցն իր ձեռքերից արյուն բերելով իրեն Քրիստոսի տեղն է դնում: Նա կարծես ինքնազոհաբերման ներկայացում է խաղում միայն նրա համար, որ երկինք գնալու հնարավորություն տա ուրիշներին: Ինչքան Գեցն իրեն ավելի է սիրում, այնքան իրեն ավելի մենակ է զգում: Նա ասում է. «Ես ուզեցի սյուն դառնալ և ինձ վրա կրել երկնակամարը: Հիմարություն. երկինքը ծակ է»: Հերոսներից մեկը՝ Հիլդան, ասում է. «Կարծում ես ես հաշվու՞մ եմ օրերը: Գոյություն ունի միայն մեկ օր, որն անընդհատ կրկնվում է: Այն մեզ տալիս են արշալույսին և ապա խլում են. երբ իջնում գիշերը: Դու կանգ առած ժամացույց ես, որը շարունակ նույն ժամն է ցույց տալիս»: Սարտրի կարծիքով գեղեցկությունը չարիք է, այն չի փրկում, այլ միայն դեպի կործանում է տանում: Գիշերն իջնում է. աղջամուղջին լավ տեսողություն է պետք Տեր Աստծուն Սատանայից տարբերելու համար: Երկիրը լոկ երևութական է. կա երկինքը և Դժոխքը, և այդքանը միայն: Դու ձևացնում ես, որ Աստծո հրամաններն ես կատարում, բայց այդ հրամաններն ինքդ ես արձակում քեզ համար: Աստված ինչ չի տեսնում, չի լսում, չի ճանաչում: Գեցը հայտնում է իր կարծիքով աշխարհի մեծագույն խաբեությունը. Աստված գոյություն չունի. ոչ՛ դրախտ, ոչ՛ Դժոխք: Կա միայն Երկիրը»: Գեցի հավատի ճանապարհորդությունը վերադառնում է ի շրջանս յուր: «Լավ է ինձ դատի մի անսահման էակ, քան իմ հավատը: Ես իմ դատը տանուլ չտվեցի: Դատը տեղի չունեցավ, քանզի չկա դատավորը: Ես ամեն ինչ վերսկսում եմ: Ես Աստծուն սպանեցի, որովհետև նա ինձ բաժանում էր մարդկանցից»:

Գեցի բնավորության ամբողջ էությունը պտտվում է ողբերգական հակամարտության շուրջ, որտեղ նա փորձում է պահպանել մեկուսացումը մարդկանցից՝ միաժամանակ գաղտնի կերպով ձգտելով սիրո և ընդունման: Գեցը կարծում է, որ նա ազատ է չարիք գործելու հարցում և դրանով պարտություն է կրում իր անհատականությունը: Սա իր փառասիրությունն է: Բայց Գեցի հպարտությունը պատրանք է, քանի որ նա միայն արտաքին հաստատակամություն ունի և հանդես է գալիս այնպես, կարծես

թե իր գործի վարպետը չէ: Հպարտ իր մենությամբ սարտրյան հերոսն ընդունում է այն պայմանը, որ հասարակությունն է սահմանում և սպասում դրա ճանաչմանը: Սարտրի շատ այլ դրամատիկ կերպարների նման, Գեցը գոյություն ունի ուրիշների, Աստծու կամ այլ մարդկանց աչքերում, և դրանով բացահայտում է ինքն իրեն:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Գեցը, ըստ երևույթին, պարադոքսալ վերաինտեգրացիայի օրինակ է, քանի որ նա չի փոխում գոյություն ունեցող հարաբերությունների կառուցվածքը, ընդհակառակը ամրապնդում է եղած հավասարակշռությունը: Վերջիվերջո նա որոշակի դեր է խաղում այդ կառուցվածքում, քանի որ սրիկան, դավաճանը և սատանան իրենցից ներկայացնում են բացասականը, որը և ապահովում է հասարակության հավասարակշիռ վիճակը:

ALVARD MAYILYAN - **PRIDE AND GLORIFICATION IN "THE DEVIL AND THE GOOD LORD" BY JEAN-PAUL SARTRE** - Sartre's works, such as the novel "Nausea", the philosophical work "Being and Nothingness", the dramas "Flies", "No Exit" and partly the novel "The Roads of Freedom", are among the biggest manifestations of existentialism. The purpose of the article is to reveal the image of the protagonist of the play "The Devil and the Good Lord", Goetz, using the concepts of pride and vanity. Sartre describes the moral adventure of man through Goetz. The isolated character tries to start a human struggle against other people. Goetz turns away from the Lord in order to present himself to the world of people. He discovers a new form of self-destruction and renounces the eternal pretence. The whole essence of Goetz's character revolves around a tragic conflict in which he tries to maintain isolation from people while secretly striving for love and acceptance. Goetz thinks he is free to do evil, but in doing so, his personality is defeated. This is his vanity. But Goetz's pride is an illusion, because his stubbornness is only external, he acts as if he is not a master of his craft. The Sartre hero, proud of his loneliness, actually only accepts the condition set by society and waits for the recognition. Like many other dramatic characters created by Sartre, he exists in the eyes of others, God or other people, and thus reveals himself. The extremely cruel warrior Goetz is the best captain in all of Germany, whose fame reigns in the city of Worms as a silent threat of destruction in the first act of the play. However, in Sartre's play, the priority is to understand Goetz in the eyes of other characters who see him, know him, and associate him with his monstrous "nature". The fact that Goetz appears only in the second scene of the play can be considered a dramatic device by which Sartre tried to make Goetz the center of the conflict. The main topic of discussion for others is this newcomer, who personifies the plot knot and is the basis of dramatic actions. It is

precisely because of the negative nature of these social values that the image of Goetz was formed: this is connected with the fate that awaits him on stage, because the hero of the Devil and Lord considers himself unique. Goetz does not look at the world through an optical device, but at every step he is tempted by the reflection of his image, inspired by other people's eyes, in which he is doomed to accept himself. Before entering the stage, he has already been assigned a place in a world where a person never thinks about getting rid of himself before the final transformation.

Key words: pride, ambition, hell, God, Devil, choice, sin, freedom, superman, existentialism.

АЛВАРД МАИЛЯН - ТЕМА ГОРДОСТИ И ПРОСЛАВЛЕНИЯ В ПЬЕСЕ ЖАН-ПОЛЯ САРТРА «ДЬЯВОЛ И ГОСПОДЬ БОГ» - Произведения Сартра, такие как роман «Тошнота», философский труд «Бытие и ничто», драмы «Мухи», «За закрытыми дверями» и отчасти роман «Дороги свободы», относятся к числу высших проявлений экзистенциализма. Цель статьи – раскрыть образ главного героя пьесы «Дьявол и Господь Бог» Геца с помощью понятий гордыни и честолюбия. Сартр представляет нравственные приключения человека через Геца. Изолированный герой пытается начать человеческую борьбу против других людей. Гец отворачивается от Бога, чтобы предоставить себя миру людей. Он открывает для себя новую форму саморазрушения и отказывается от вечного притворства. Вся суть характера Геца вращается вокруг трагического конфликта, во время которого он пытается сохранить изоляцию от людей, одновременно тайно стремясь к любви и принятию. Гец думает, что он свободен творить зло, но тем самым его личность терпит поражение. Это его честолюбие. Но гордыня Геца — иллюзия, потому что упорство у него только внешнее, он действует так, как будто он не мастер своего дела. Гордый своим одиночеством сартровский герой на самом деле лишь принимает поставленное обществом условие и ждет его признания. Как и многие другие драматические персонажи Сартра, он существует в глазах остальных, Бога или других людей, и таким образом раскрывает сам себя. Чрезвычайно жестокий воин Гец — лучший капитан во всей Германии, чья слава царит в городе Вормс как немая угроза разрушения в первом акте пьесы. Однако в пьесе Сартра приоритетным является понимание Геца в глазах других героев, которые его видят, знают, связывают с его чудовищной «натурой». Тот факт, что Гец появляется только во второй сцене пьесы, можно считать драматическим приемом, с помощью которого Сартр пытался сделать Геца центром конфликта. Главной темой обсуждения для окружающих является

этот новичок, который и олицетворяет собой сюжетный узел и является основой драматических действий. Именно из-за негативного характера этих социальных ценностей сформировался образ Геца: это связано с судьбой, которая ждет его на сцене, потому что герой Дьявола и Бога считает себя уникальным. Гец не смотрит на мир через оптический прибор, но на каждом шагу его искушает отражение своего образа, навеянное чужими глазами, в которых он обречен принять себя. Перед выходом на сцену ему уже отведено место в мире, где человек никогда не думает о том, чтобы избавиться от себя до окончательного преображения.

Ключевые слова: гордость, честолюбие, ад, Бог, Дьявол, выбор, грех, свобода, сверхчеловек, экзистенциализм.

Գրականության ցանկ

1. Ռիկյոր Պոլ, Արտացոլում «Սատանան և տեր Աստված», Նոյեմբեր 1951, 711-719:
2. Սարտր, Ժան-Պոլ. Բոդլեր. Փարիզ, 1963թ:
3. «Սատանան և տեր Աստված», Փարիզ, 1951թ:
4. «Գոյը և չգոյը», Փարիզ, 1943թ:
5. «Ճանճերը», Փարիզ, 194թ:
6. «Կատակերգուն և նահատակը», Փարիզ, 1952թ:

DOI: 10.54503/1829-0116-2022.1-272